DOI: 10.59560/18291155-2025.4-189

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
«Եվրասիա» համալսարանի
ասպիրանտուրայի հայցորդ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՒԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ամփոփագիր

Սույն հոդվածն ուսումնասիրում է շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը՝ որպես պետության սահմանադրական կարգի հիմունքների բաղադրիչ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի և համեմատական սահմանադրաիրավական փորձի համատեքստում: Վերլուծվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այն կարգավորումները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն ամրագրում են շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը՝ կապելով այն իրավական պետության, մարդու արժանապատվության, կյանքի և առողջության իրավունքների հետ: Հոդվածում ներկայացվում է Եվրոպական դատարանի նախադեպերի խորացված իրավական վերլուծություն, ինչպես նաև համեմատական ուսումնասիրություն Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և այլ երկրների սահմանադրական մոդելների վերաբերյալ:

Սույն հոդվածի նպատակն է վերլուծել շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը՝ որպես պետության սահմանադրական կարգի հիմունքների բաղկացուցիչ և մարդու հիմնարար իրավունքների արդյունավետ ապահովման պայման՝ բացահայտելով դրա սահմանադրաիրավական նշանակությունը մարդու կյանքի, առողջության և բարենպաստ կենսամիջավայրում ապրելու իրավունքների իրացման համատեքստում, ինչպես նաև ուսումնասիրելով պետության դրական և բացասական պարտավորությունները միջազգային և եվրոպական իրավունքի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի և համեմատական սահմանադրաիրավական մոտեցումների լույսի ներքո:

Հիմնաբառեր. սահմանադրական կարգ, շրջակա միջավայր, մարդու իրավունքներ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եվրոպական դատարան, համեմատական սահմանադրական իրավունք:

Ներածություն. Շրջակա միջավայրի պահպանությունը 21-րդ դարում վերաճել է համընդհանուր սահմանադրական կարգի հիմնախնդրի: Էկոլոգիական ռիսկերը ոչ միայն բնապահպանական, այլև սահմանադրաիրավական բնույթ ունեն, քանի որ ուղղակիորեն առնչվում են մարդու կյանքի, առողջության և արժանապատվության պահպանությունը: Ժամանակակից սահմանադրական պետությունում շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը դիտվում է ոչ թե որպես ոլորտային քաղաքականություն, այլ որպես սահմանադրական կարգի կայունության նախապայման[1]:

Մեթոդներ. Մեր հետազոտությունը ներառել է սահմանադրական և իրավական նորմերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պահպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործվել են համեմատական իրավական մեթոդը, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդները: Այս մեթոդները թույլ են տվել մեզ բացահայտել շրջակա միջավայրի անվտանգության սահմանադրական նշանակությունը և որոշել պետական վերահսկողության կանխարգելիչ մեխանիզմները ամրապնդելու անհրաժեշտությունը:

Շրջակա միջավայրի պահպանությունը, որպես պետության սահմանադրական կարգի բաղադրիչ

Սահմանադրական կարգի հիմունքները ներկայացնում են պետության այն հիմնարար արժեքներն ու սկզբունքները, որոնց վրա կառուցվում է պետության իրավական, քաղաքական և սոցիալական կազմակերպումը: Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածը շրջակա միջավայրի պահպանությունը բարձրացնում է սահմանադրական արժեքի մակարդակի՝ այն դիտարկելով ոչ միայն որպես առանձին ոլորտային քաղաքականություն, այլ որպես պետության գոյության և կայունության նախապայման[2]:

Շրջակա միջավայրի պահպանության ամրագրումը սահմանադրական կարգի հիմունքների մակարդակում ենթադրում է, որ էկոլոգիական անվտանգությունը ոչ միայն հանրային քաղաքականության ուղղություն է, այլև՝ պետական իշխանության լեգիտիմության, արդյունավետ կառավարման և սահմանադրական կարգի կայունության անքակտելի բաղադրիչ: Այս մոտեցման շրջանակում պետությունը կրում է սահմանադրական դրական պարտավորություն՝ իր լիազորությունների իրականացման բոլոր ոլորտներում (օրենսդիր, գործադիր, դատական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մակարդակներում) առաջնորդվելու բնապահպանական առաջնահերթություններով, ապահովելու շրջակա միջավայրի պահպանությանը և կանխելու այնպիսի գործողությունները

[1] *Տե՛ս* ***Բոյլ Ա.*** *Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. ո՞րն է հաջորդ քայլը: (**Boyle, A.** (2012). Human Rights and the Environment: Where Next? European Journal of International Law, 23(3), 613–642):*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.) (12-րդ հոդված):*

կամ անգործությունը, որոնք կարող են սպառնալ մարդու հիմնարար իրավունքների իրացմանը և սահմանադրական կարգի անվտանգությանը:

Սահմանադրության 12-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված կայուն զարգացման սկզբունքը հանդիսանում է համակարգող (integrative) սահմանադրական նորմի դեր: Այն կապում է տնտեսական ազատությունները, սոցիալական պետության գաղափարը և շրջակա միջավայրի պահպանությունը՝ կանխելով դրանց հակադրումը միմյանց[1]:

Սահմանադրական կարգի հիմունքների տեսանկյունից կայուն զարգացման սկզբունքը սահմանում է, որ տնտեսական գործունեության ազատությունը և սեփականության իրավունքը չեն կարող իրականացվել այնպես, որ խաթարեն հանրային շահը, էկոլոգիական անվտանգությունը կամ ապագա սերունդների իրավունքները: Այսպիսով, այն հանդես է գալիս որպես սահմանադրական սահմանափակման լեգիտիմ հիմք, որն արդարացնում է բնապահպանական պահանջների առաջնայնությունը մասնավոր շահերի նկատմամբ:

Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրված ապագա սերունդների առջև պատասխանատվության գաղափարը սահմանադրական կարգի հիմունքների շրջանակում արտահայտում է միջսերնդային արդարության սկզբունքը: Սահմանադրական կարգը, այս առումով, չի սահմանափակվում միայն ներկա հասարակական հարաբերությունների կարգավորմամբ, այլ տարածվում է նաև ապագա հասարակության շահերի պաշտպանության վրա:

Սահմանադրության 12-րդ հոդվածի երկրորդ մասը սահմանում է յուրաքանչյուրի պարտականությունը հոգալ շրջակա միջավայրի պահպանության մասին, սահմանադրական կարգի հիմունքների տեսանկյունից արտահայտում է հասարակական համերաշխության և պատասխանատվության սկզբունքը: Սահմանադրական կարգը ձևավորվում է ոչ միայն իրավունքների ճանաչման, այլև դրանց իրականացման համար անհրաժեշտ պարտականությունների համաչափ բաշխման միջոցով[2]:

Այս նորմն ամրապնդում է այն մոտեցումը, ըստ որի՝ շրջակա միջավայրի պահպանությունը համընդհանուր հանրային խնդիր է, և դրա իրականացումը չի կարող ամբողջությամբ դրվել միայն պետության վրա: Այն սահմանադրական հիմք է ստեղծում անհատների և իրավաբանական անձանց վարքագծի սահմանափակումների և պարտավորությունների համար՝ առանց մարդու հիմնարար իրավունքների էության խախտման:

Սահմանադրության 12-րդ հոդվածը սահմանադրական կարգի հիմունքների լույսի ներքո դիտարկելով՝ կարելի է գնահատել որպես ուղղորդող և մեկնաբանող նորմ, որը պետք է հաշվի առնվի պետական մարմինների կողմից այլ հիմնարար իրավունքների և ազատությունների բովանդակության սահմանման ընթացքում:

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.) (12-րդ հոդված):*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.) (12-րդ հոդվածի 2-րդ մաս):*

Այն նպաստում է մարդու կյանքի, առողջության, արժանապատիվ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքների համակարգային մեկնաբանությանը:

Սահմանադրությունը շրջակա միջավայրի պահպանության հարցը չի կարգավորում որպես մեկուսացված ոլորտային պետական պարտավորություն, այլ այն ներառում է Սահմանադրության արժեքային և նորմատիվ ամբողջական համակարգ: Շրջակա միջավայրի պահպանությունը բխում է ոչ միայն համապատասխան հատուկ հոդվածներից, այլև Սահմանադրության առաջին գլխում ամրագրված սահմանադրական կարգի հիմունքներից, որոնք ձևավորում են պետության գործունեության ընդհանուր ուղղվածությունը և սահմանում են նրա հիմնարար պարտավորությունները:

Սահմանադրության առաջին գլուխը կրում է հիմնարար արժեքային բնույթ և ամրագրում է այն սկզբունքները, որոնք ունեն գերակա իրավական ուժ և ուղղորդող նշանակություն ամբողջ սահմանադրաիրավական համակարգի համար: Այդ սկզբունքները չեն սահմանափակվում միայն պետական իշխանության կազմակերպման հարցերով, այլ վերաբերում են հասարակության և պետության հարաբերությունների փիլիսոփայությանը՝ ներառյալ մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխհարաբերությունները:

Մասնավորապես, մարդու արժանապատվության գերակայության սկզբունքը ենթադրում է, որ պետությունը պարտավոր է ապահովել կյանքի և առողջության համար անվտանգ միջավայր: Շրջակա միջավայրի աղտոտումը կամ էկոլոգիական ռիսկերի անտեսումը կարող է դիտարկվել ոչ միայն որպես վարչական կամ տնտեսական խնդիր, այլ որպես մարդու արժանապատվության և կենսագործունեության հիմնարար պայմանների խաթարում: Այս առումով շրջակա միջավայրի պահպանությունը ստանում է սահմանադրական արժեքի կարգավիճակ:

Սոցիալական պետության սկզբունքը ևս կարևոր նշանակություն ունի բնապահպանական քաղաքականության սահմանադրական հիմնավորման տեսանկյունից: Սոցիալական պետությունը պարտավոր է ապահովել ոչ միայն սոցիալական արդարություն և նվազագույն կենսապայմաններ, այլև այնպիսի միջավայր, որը թույլ կտա քաղաքացիներին իրականացնել իրենց սոցիալական և տնտեսական իրավունքներն առանց առողջությանը և կյանքին սպառնացող վտանգների:

Իրավական պետության սկզբունքը պահանջում է, որ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական քաղաքականությունը հիմնված լինի օրենքի գերակայության, իրավական որոշակիության, կանխատեսելիության և հաշվետվողականության վրա: Սա նշանակում է, որ պետությունը չի կարող սահմանափակվել ձևական կարգավորումներով կամ դեկլարատիվ նորմերով, այլ պարտավոր է ստեղծել արդյունավետ իրավական մեխանիզմներ՝ ուղղված շրջակա միջավայրի վնասների կանխարգելմանը, վերահսկողությանը և պատճառված վնասի վերականգնմանը:

Ժողովրդավարության սկզբունքը ևս ունի էական նշանակություն շրջակա միջավայրի պահպանության համատեքստում: Շրջակա միջավայրի հարցերը անմիջականորեն առնչվում են հանրային շահին և պահանջում են հանրային մասնակցություն, թափանցիկություն և շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվության մատչելիություն: Ժողովրդավարական պետության պայմաններում քաղաքացիները պետք է ունենան իրական հնարավորություններ մասնակցելու բնապահպանական որոշումների ընդունման գործընթացին, ինչը բխում է ոչ միայն ոլորտային օրենսդրությունից, այլև սահմանադրական կարգի հիմունքներից և պետության միջազգային պարտավորություններից:

Այսպիսով, շրջակա միջավայրի պահպանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության շրջանակում պետք է դիտարկել որպես բազմաշերտ և համակարգային պարտավորություն, որը բխում է սահմանադրական կարգի հիմունքների ամբողջությունից: Այդ հիմունքները ձևավորում են արժեքային միջավայր, որի ներսում պետությունը պարտավոր է իրականացնել կանխարգելիչ, պաշտպանական և վերականգնողական բնապահպանական քաղաքականություն՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքների իրական և արդյունավետ պահպանությունը: Նման մոտեցումը թույլ է տալիս շրջակա միջավայրի իրավունքը դիտարկել ոչ թե որպես երկրորդական կամ օժանդակ ոլորտ, այլ որպես սահմանադրական կարգի էական բաղադրիչ:

Մարդու իրավունքը և շրջակա միջավայրը. պետության սահմանադրահիրավական պարտավորությունները սահմանադրական կարգի հիմունքների համատեքստում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանությունը չի հանդիսանում ինքնուրույն և մեկուսացված իրավունք, այլ կառուցվածքային տարր է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համակարգում: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիա) 2-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածների համակցված կիրառումը ձևավորում է պետության դրական պարտականությունների համալիր մոդել, որը ներառում է կանխարգելում, վերահսկողություն, տեղեկատվության ապահովում և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ:

Սահմանադրական տեսանկյունից սա նշանակում է, որ շրջակա միջավայրի պահպանության ձախողումը կարող է հանգեցնել ոչ թե առանձին իրավունքի խախտման, այլ սահմանադրական կարգի հիմունքների խաթարման: Հայաստանի Հանրապետության իրավակարգում այս մոտեցումը պահանջում է պետական իշխանություններից շրջակա միջավայրի հարցերը դիտարկել մարդու

հիմնարար իրավունքների համատեքստում և կիրառել Եվրոպական դատարանի ձևավորած չափանիշները[1]:

Սահմանադրական հիմքերը համահունչ են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներին և սահմանված չափանիշներին: Մասնավորապես, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) շրջանակում Եվրոպական դատարանը Öneryildiz v. Turkey (2004) գործով արձանագրել է, որ պետության վրա դրվում է պարտականություն ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ կյանքի նկատմամբ սպառնացող բնապահպանական ռիսկերը չեզոքացնելու նպատակով: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի (անձնական և ընտանեկան կյանքի հարգում) առումով Եվրոպական դատարանը López Ostra v. Spain (1994) և Fadeyeva v. Russia (2005) գործերով ճանաչել է, որ ծանր բնապահպանական աղտոտումը կարող է համարվել միջամտություն անձնական և ընտանեկան կյանքին, իսկ պետությունը պարտավոր է ապահովել արդյունավետ վերահսկողություն և վերականգնողական միջոցներ: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը (արտահայտվելու և տեղեկատվության ազատություն), ինչպես ընդգծվել է Taşkin and Others v. Turkey (2004) գործով, ապահովում է քաղաքացիների իրավունքը տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի ռիսկերի մասին, ինչը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցելու բնապահպանական որոշումների ընդունման գործընթացին[2]:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության և Եվրոպական դատարանի իրավական համակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանությունը Հայաստանում Հանրապետությունում ոչ միայն քաղաքական կամ ոլորտային պարտավորություն է, այլև սահմանադրական և միջազգային մարդու իրավունքների պարտավորություն: Շրջակա միջավայրի իրավունքը պետք է դիտարկել որպես Սահմանադրության և մարդու իրավունքների ապահովման անբաժանելի բաղադրիչ, որն ուղղված է կանխարգելիչ, պաշտպանական և վերականգնողական բնապահպանական քաղաքականության իրականացմանը[3]:

Չնայած Սահմանադրությամբ շրջակա միջավայրը առանձին հոդվածով որպես ինքնուրույն իրավունք հստակ չի ձևակերպվում, միջազգային և համաշխարհային իրավական դոկտրինն ընդգծում է, որ մարդու կյանքի, առողջության և

---

[1] *Տե՛ս Եվրոպայի Խորհուրդ. (1950). Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. Հռոմ (Council of Europe. (1950). Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome: Council of Europe):*

[2] *Տե՛ս López Ostra v. Spain (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի, 09.12.1994 թ. (գանգատ՝ 16798/90): Տե՛ս նաև Fadeyeva v. Russia (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005 թ. (գանգատ՝ 55723/00):*

[3] *Տե՛ս Öneryildiz v. Turkey, GC (Օներյըլդիզն ընդդեմ Թուրքիայի, 30.11.2004 թ. (գանգատ՝ 48939/99): Տե՛ս նաև Taşkin and Others v. Turkey, (Թաշքընն և այլք ընդդեմ Թուրքիայի (գանգատ՝ 46117/99),*
López Ostra v. Spain (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի, 09.12.1994 թ. (գանգատ՝ 16798/90),
Fadeyeva v. Russia (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005 թ. (գանգատ՝ 55723/00),
Taşkin and Others v. Turkey (Թաշքընն և այլք ընդդեմ Թուրքիայի, (գանգատ՝ 46117/99) 10.11.2004 թ.:

արժանապատվության իրավունքի անվտանգ իրագործումն անխզելիորեն կախված է շրջակա միջավայրի պատշաճ վիճակից: Ակադեմիական վերլուծություններում այս իրավահարաբերությունը բնութագրվում է որպես մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պահպանության ներքին կառուցվածքային կապ: Շրջակա միջավայրի աղտոտումը հանդիսանում է այդ իրավունքների իրականացման խոչընդոտ, և համապատասխանաբար, պետությունների պարտականությունները պետք է ընդգրկեն ոչ միայն մարդու իրավունքների չխախտումը, այլև դրանց արդյունավետ ապահովումը[1]:

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անկախ փորձագետների և միջազգային զեկույցների համաձայն՝ պետությունները պարտավոր են ապահովել բնական ռեսուրսների կայուն օգտագործում, շրջակա միջավայրի վտանգավոր ազդեցությունների կանխարգելում, հանրությանը անաչառ և ամբողջական տեղեկատվության հասանելիություն, ինչպես նաև հանրային խորհրդատվություն՝ մարդու կյանքի և առողջության իրավունքների նկատմամբ սպառնալիքները նվազեցնելու նպատակով[2]:

Սահմանադրական իրավունքի տեսաբանները տարբերակում են պետության պարտավորությունների երկու հիմնական տեսակ՝

- **բացասական (negative) պարտավորություններ**, երբ պետությունը պարտավոր է զերծ մնալ որևէ իրավունքի խախտումից,
- **դրական (positive) պարտավորություններ**, երբ պետությունը պարտավոր է ձեռնարկել ակտիվ միջոցներ՝ իրավունքների լիարժեք և արդյունավետ իրագործումն ապահովելու համար:

Շրջակա միջավայրի խիստ վատթարացումը անմիջական ազդեցություն է ունենում մարդու կյանքի և առողջության իրավունքների վրա, ինչը միջազգային փորձը հաճախ կապում է այդ իրավունքների պետական դրական պարտավորությունների իրականացման հետ՝ բնապահպանական պահպանության միջոցառումների միջոցով: Որոշ պետությունների սահմանադրություններում (օրինակ՝ Կոլումբիա, Էկվադոր) մարդու իրավունքը ապրել առողջ և անվտանգ շրջակա միջավայրում ճանաչվում է որպես անմիջական իրավունք կամ որպես պետության հստակ սահմանադրական պարտավորություն:

---

[1] *Տե՛ս* ***Բոյլ Ա.*** *(2012). Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. ո՞րն է հաջորդ քայլը: Եվրոպական միջազգային իրավունքի ամսագիր, (****Boyle, A.*** *(2012). Human Rights and the Environment: Where Next? European Journal of International Law, 23(3), 613–642):*

Սանդս Փ., Փիլ Ջ., Ֆաբրա Ա. և Մաքենզի Ռ. *(2018). Միջազգային բնապահպանական իրավունքի սկզբունքներ (4-րդ հրատարակություն): Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն (****Sands, P., Peel, J., Fabra, A., & MacKenzie, R.*** *(2018). Principles of International Environmental Law (4th ed.). Cambridge University Press):*

Բոյլ Ա. և Անդերսոն Մ. *(1996). Շրջակա միջավայրի պաշտպանության մարդու իրավունքների մոտեցումները (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն (****Boyle, A., & Anderson, M.*** *(1996). Human Rights Approaches to Environmental Protection. Oxford University Press):*

[2] *Տե՛ս* ***Նոքս Ջ.Հ. և Փեջան Ռ.*** *(2018). Առողջ շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքը: Հարվարդի բնապահպանական իրավունքի ակնարկ (****Knox, J. H., & Pejan, R.*** *(2018). The Human Right to a Healthy Environment. Harvard Environmental Law Review, 42(2), 1–40):*

Եթե պետությունը հրաժարվում է իր դրական պարտավորությունների լիարժեք իրականացումից՝ օրինակ՝ չի ընդունում անհրաժեշտ իրավական կարգավորումներ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու նպատակով կամ չի ապահովում վերահսկողական լիազորությունների արդյունավետ իրականացում, ապա նման վարքագիծը կարող է գնահատվել որպես սահմանադրական պարտավորության խախտում:

Ինչպես նշել եմ վերևում, Եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է, որ պետության անգործությունը բնապահպանական վտանգների առնչությամբ կարող է հանգեցնել մարդու կյանքի կամ առողջության իրավունքի խաթարման:

Ժամանակակից սահմանադրական իրավունքում շրջակա միջավայրի պահպանությունը ձևավորվել է որպես միջոլորտային (cross-cutting) սահմանադրական արժեք, որը ներթափանցում է մարդու հիմնարար իրավունքների ամբողջ համակարգը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ շրջակա միջավայրի պահպանությունն ամրագրված է ոչ միայն որպես բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք, այլև որպես պետության ընդհանուր պարտականություն՝ ապահովելու մարդու արժանապատիվ և անվտանգ ապրելու իրավունքը:

Այս իմաստով շրջակա միջավայրի պահպանությունը հանդես է գալիս որպես սահմանադրական կարգի նյութական բաղադրիչ, որի անտեսումը կարող է հանգեցնել հիմնարար իրավունքների համակարգային խախտման:

Կյանքի իրավունքը և էկոլոգիական վտանգները

Կյանքի իրավունքը (Սահմանադրության 24-րդ և Կոնվենցիայի 2-րդ հոդվածներ) հանդիսանում է սահմանադրական և կոնվենցիոն համակարգերի հիմնարար արժեքներից մեկը[1]:

Եվրոպական դատարանը Öneryildiz v. Turkey (GC, 2004) գործով արձանագրել է, որ աղբավայրի պայթյունի հետևանքով առաջացած մարդկային զոհերը պայմանավորված էին պետական մարմինների անգործությամբ և վերահսկողության բացակայությամբ: Դատարանը հստակեցրել է, որ պետությունը պարտավոր է՝

ա) նույնականացնել կյանքի համար վտանգ ներկայացնող ռիսկերը,

բ) ընդունել կանխարգելիչ օրենսդրական և վարչական միջոցներ,

գ) ապահովել վտանգավոր գործունեության արդյունավետ պետական վերահսկողություն[2]:

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.). (24-րդ հոդված):*

Եվրոպայի Խորհուրդ. (1950). Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. Հռոմ (Council of Europe. (1950). Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome: Council of Europe) (Կոնվենցիայի 2-րդ հոդված):

[2] *Տե՛ս Öneryildiz v. Turkey, GC (Օներյըլդըզն ընդդեմ Թուրքիայի, Մեծ պալատ, 30.11.2004 թ. (գանգատ՝ 48939/99):*

Նմանատիպ դիրքորոշում արտահայտվել է նաև Budayeva and Others v. Russia (2008) գործով, որտեղ բնական աղետի հետևանքով զոհված անձանց վերաբերյալ Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում՝ պետության կանխարգելիչ միջոցառումների բացակայության պատճառով[1]:

Անձնական և ընտանեկան կյանքի հարգումը և շրջակա միջավայրը

Անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը (Սահմանադրության 25-րդ, 31-րդ և Կոնվենցիայի 8-րդ հոդվածներ) Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում դարձել է շրջակա միջավայրի պահպանության առանցքային կիրառելի նորմ: Դատարանն արձանագրել է, որ շրջակա միջավայրի լուրջ աղտոտումը, աղմուկը կամ վտանգավոր արտադրական գործունեությունը կարող են խաթարել անձի անձնական և ընտանեկան կյանքը՝ անկախ այն հանգամանքից, թե առողջությանը պատճառված վնասը ամբողջությամբ ապացուցված է, թե ոչ[2]:

Եվրոպական դատարանը López Ostra v. Spain (1994) գործով արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում քաղաքային թափոնների վերամշակման կայանի արտանետումների պատճառով: Նույն մոտեցումը զարգացվել է Fadeyeva v. Russia (2005) և Dubetska and Others v. Ukraine (2011) գործերով, որտեղ երկարաժամկետ արդյունաբերական աղտոտումը ճանաչվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջներին անհամատեղելի[3],[4]:

Տեղեկատվություն ստանալու իրավունքը և էկոլոգիական թափանցիկությունը

Տեղեկատվություն ստանալու իրավունքը (Սահմանադրության 42-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածներ) ունի առանձնահատուկ նշանակություն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, քանի որ առանց տեղեկատվության

---

[1] *Տե՛ս Budayeva and Others v. Russia, (Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, 20.03.2008 թ. (գանգատներ՝ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02, 15343/02 միացված գործեր), այս գործը վերաբերում է բնական աղետներից պաշտպանության պետական պարտավորություններին):*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.). (25-րդ հոդված):*

Եվրոպայի Խորհուրդ. (1950). Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. Հռոմ (Council of Europe. (1950). Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome: Council of Europe) (Կոնվենցիայի 8-րդ հոդված):

[3] *Տե՛ս Fadeyeva v. Russia, (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի, 09.06.2005 թ. (գանգատ՝ 55723/00):*

[4] *Տե՛ս Dubetska and Others v. Ukraine, (Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի, 10.02.2011 թ. (գանգատ՝ 30499/03):*

մատչելիության անհնար է ինչպես անհատական ինքնապաշտպանությունը, այնպես էլ հանրային վերահսկողությունը[1]:

Եվրոպական դատարանի պրակտիկան հաստատում է, որ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը թույլ է տալիս քաղաքացիներին վերահսկել պետական քաղաքականությունը և մասնակցել բնապահպանական որոշումների ընդունման գործընթացին: Társaság a Szabadságjogokért v. Hungary և Halford v. United Kingdom գործերը ցույց են տալիս, որ տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է դիտարկվել մարդու հիմնարար իրավունքների խախտման համատեքստում[2]:

Շրջակա միջավայրի վերաբերյալ հանրային տեղեկացված լինելու իրավունքը ամրապնդվում է նաև միջազգային պարտավորություններով: Մասնավորապես, Օրհուսի կոնվենցիան ամրագրում է տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և իրավական պաշտպանության հիմնարար սկզբունքները[3]:

Այս համադրությունը ցույց է տալիս, որ Սահմանադրության 42-րդ և Կոնվենցիայի 10-րդ հոդվածները, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հետ համատեղ, ձևավորում են այն իրավական հիմքը, որի վրա կառուցվում է պետության էկոլոգիական քաղաքականության մշակումը, դրա իրականացման թափանցիկությունը և քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքի արդյունավետ պաշտպանությունը: Օրհուսի կոնվենցիան լրացնում է այս իրավական շրջանակը՝ տրամադրելով գործնական մեխանիզմներ տեղեկատվության հասանելիության, հանրային մասնակցության և իրավական պաշտպանության ապահովման համար:

Ամփոփելով սահմանադրական կարգի հիմունքների համատեքստում մարդու իրավունքների ապահովման հարցը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ սահմանադրական տեսանկյունից մարդու իրավունքը ապրել առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում դիտարկվում է ոչ միայն որպես անհատական

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.) (42-րդ հոդված):*

Եվրոպայի Խորհուրդ. (1950). Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. Հռոմ (Council of Europe. (1950). Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome: Council of Europe) (Կոնվենցիայի 10-րդ հոդված):

[2] *Տե՛ս Társaság a Szabadságjogokért v. Hungary, (Թարշաշագ ա Սաբադշագյոգոկերտն ընդդեմ Հունգարիայի, 14.03.2009 թիվ (գանգատ՝ 37374/05), ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ Հունգարիան խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, երբ մերժել է հասարակական շահերի վերաբերյալ փաստաթղթերին մուտք ունենալու հնարավորությունը:*

[3] *Տե՛ս Միավորված Ազգերի Կազմակերպություն (1998): Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա), (United Nations. (1998). Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention)):*

իրավունք, այլև որպես պետության՝ սահմանադրությամբ ամրագրված հիմնարար պարտականություն:

Այսպիսով, շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը հանդիսանում է պետության սահմանադրական կարգի հիմունքների անբաժանելի բաղադրիչ, որտեղ իրավական պահպանության արդյունավետությունը ուղիղ կապ ունի մարդու կյանքի և առողջության պաշտպանության հետ: Սահմանադրական պարտավորությունների և միջազգային ստանդարտների համադրությունն ապահովում է իրավական և կառավարման համակարգերի փոխհամադրելիությունը, ստեղծում մարդու իրավունքների և շրջակա միջավայրի փոխկապակցվածության ամուր տեսական հիմք և նպաստում կայուն զարգացման ապահովմանը:

Այլ երկրների սահմանադրական կարգավորումները. շրջակա միջավայրի պահպանությունը սահմանադրական կարգի համատեքստում

Ժամանակակից սահմանադրական իրավակարգերում շրջակա միջավայրի պահպանությունն աստիճանաբար վերափոխվում է սահմանադրական կարգի հիմքային տարրի, որը պայմանավորում է պետության գործունեության նպատակները, սահմանները և գործառույթները: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրների իրավակարգերում շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը ներառվում է պետականության սահմանադրական կարգի հիմքային սկզբունքների համակարգում՝ իրավական պետության, սոցիալական պետության, մարդու արժանապատվության և միջսերնդային արդարության գաղափարների հետ սերտ փոխկապակցվածությամբ:

Գերմանիա. իրավական պետություն և միջսերնդային պատասխանատվությունը. Գերմանիայի Սահմանադրության 20ա հոդվածի համաձայն՝ շրջակա միջավայրի պահպանությունն ամրագրվում է որպես պետության սահմանադրական նպատակ՝ ուղղված «բնական կյանքի հիմքերի պահպանությանը» նաև ապագա սերունդների համար: Այս նորմը դիտարկվում է ոչ թե որպես դեկլարատիվ քաղաքական նպատակ, այլ որպես իրավական պետության (Rechtsstaat) և սոցիալական պետության (Sozialstaat) սկզբունքների նյութական բաղադրիչ: Դաշնային սահմանադրական դատարանի 2021 թվականի կլիմայական որոշումը հստակեցրել է, որ շրջակա միջավայրի ոչ բավարար պահպանությունը կարող է հանգեցնել հիմնարար իրավունքների ապագա անհամաչափ սահմանափակման, ինչով ձևավորվում է սահմանադրական պարտավորությունների ժամանակային ընդլայնված (intertemporal) ընկալում[1]:

Ֆրանսիա. հանրային շահի գերակայություն և նախազգուշական սկզբունք. Ֆրանսիայի սահմանադրական համակարգում Շրջակա միջավայրի խարտիան (Charte de l'environnement, 2004) ինտեգրված է Սահմանադրական բլոկի (bloc de constitutionnalité) մեջ, ինչի արդյունքում այն օժտված է սահմանադրական իրավական ուժով և ենթակա է պարտադիր կիրառման՝ Սահմանադրության,

[1] *Տե՛ս Գերմանիայի Դաշնության Սահմանադրություն (Grundgesetz für die Bundesrepublik Deutschland, 1949 թ., փոփոխված՝ 2021 թ.).*

Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի (1789) և 1946 թ. Սահմանադրության նախաբանի հետ համահավասար մակարդակում: Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը ճանաչել է Խարտիայի նորմերի անմիջական իրավական ազդեցությունը և դրանց հիմքով իրականացրել է ինչպես օրենքների սահմանադրականության վերահսկողություն, այնպես էլ պետության բնապահպանական պարտավորությունների մեկնաբանություն՝ դրանք դիտարկելով մարդու հիմնարար իրավունքների և հանրային շահի պաշտպանության համատեքստում[1]:

Իտալիա. սահմանադրական արժեքների էվոլյուցիա. Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 9-րդ հոդվածում 2022 թվականի սահմանադրական փոփոխություններով շրջակա միջավայրի, կենսաբազմազանության և էկոհամակարգերի պահպանությունն ամրագրվել է որպես սահմանադրական արժեք և ներառվել պետության հիմնարար նպատակների ու սկզբունքների շարքում՝ ստանալով բարձրագույն սահմանադրական պաշտպանության կարգավիճակ: Միաժամանակ Սահմանադրության 41-րդ հոդվածում տնտեսական և ձեռնարկատիրական գործունեության ազատությունը ենթարկվել է նյութական սահմանադրական սահմանափակման՝ ուղղակիորեն պայմանավորվելով մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության գերակայության պահանջներով: Սահմանադրական այս վերանայումն արտահայտում է պետության արժեքային հիմքերի վերահիմաստավորում, որի շրջանակում էկոլոգիական անվտանգությունը դիտարկվում է ոչ միայն որպես հանրային շահ, այլև որպես պետականության կայունության և սահմանադրական կարգի նյութական ու արժեքաբանական հենասյուն[2]:

Իսպանիա և Պորտուգալիա. սոցիալական պետություն և իրավունքի գործադրելիություն. Իսպանիայի և Պորտուգալիայի սահմանադրական մոդելներում շրջակա միջավայրի իրավունքը սերտորեն կապված է սոցիալական պետության գաղափարի հետ: Իսպանիայի Սահմանադրության 45-րդ հոդվածը, թեև դասակարգվում է սոցիալական սկզբունքների շարքում, Սահմանադրական դատարանի կողմից օգտագործվում է որպես մեկնաբանման գործիք հիմնարար իրավունքների պաշտպանության համար: Պորտուգալիայի Սահմանադրության 66-րդ հոդվածը ձևավորում է իրավաբանորեն գործադրելի (justiciable) բնապահպանական իրավունքների համակարգ՝ պետական մարմինների համար սահմանելով հստակ և բազմաբնույթ պարտականություններ[3]:

Լատինական Ամերիկա. էկոցենտրիկ սահմանադրականություն. Կոլումբիայի և Էկվադորի սահմանադրական փորձը ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության առավել զարգացած՝ էկոցենտրիկ մոտեցում: Բնության

---

[1] *Տե՛ս Ֆրանսիայի Սահմանադրության շրջակա միջավայրի խարտիա (Charte de l'environnement, 2004).*

[2] *Տե՛ս Իտալիայի Սահմանադրություն (Costituzione della Repubblica Italiana, 1948, փոփոխություններ՝ 2022):*

[3] *Տե՛ս Իսպանիայի Սահմանադրություն (Constitución Española, 1978) և Պորտուգալիայի Սահմանադրություն (Constituição da República Portuguesa, 1976):*

իրավունքների ճանաչումը և շրջակա միջավայրի դիտարկումը որպես ինքնուրույն սահմանադրական արժեք ընդլայնում են սահմանադրական կարգի հիմունքների ավանդական մարդակենտրոն ընկալումը՝ ընդգծելով պետության պատասխանատվությունը ոչ միայն մարդու, այլ նաև էկոհամակարգերի նկատմամբ[1]:

Վերը նշված իրավակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանությունը ժամանակակից սահմանադրական պետություններում հանդիսանում է՝

1. իրավական և սոցիալական պետության նյութական բաղադրիչ,
2. մարդու կյանքի և առողջության իրավունքների իրականացման նախապայման,
3. տնտեսական ազատությունների սահմանադրական սահմանափակիչ,
4. միջսերնդային արդարության արտահայտություն:

Այս համատեքստում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 24-րդ և 25-րդ հոդվածների համադրությունը 12-րդ հոդվածի հետ պետք է ընկալվի որպես սահմանադրական կարգի ներքին համահունչ համակարգ, որը պետության վրա դնում է ոչ միայն բացասական (չվնասելու), այլ նաև ակտիվ և կանխարգելիչ լիազորությունների իրականացման պարտավորություններ: Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգավորումների մեկնաբանությունը համեմատական սահմանադրական փորձի լույսի ներքո ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանության և դրան առնչվող մարդու իրավունքների նորմերը հանդես են գալիս ոչ թե որպես հռչակագրային սոցիալական դրույթներ, այլ որպես կոնստիտուցիոնալ գործող սկզբունքներ, որոնք ապահովում են իրավունքի և պետական պարտավորության կառուցվածքային փոխկապակցվածությունը և հիմք են ստեղծում արդյունավետ դատական պաշտպանության համար:

Կարևոր է նշել, որ ակադեմիական և միջազգային պրակտիկայում այս կարգավորումը համարվում է հիմնարար՝ բնապահպանական իրավունքների արդյունավետ իրագործումն ապահովելու համար, և այն մոտենում է միջազգային չափանիշներին, որոնք լայնորեն ընդգրկում են «բարենպաստ միջավայրի» հասկացությունը՝ ներառելով օդի, ջրի, հողի, աղմուկի և այլ բնապահպանական գործոնների անվտանգ մակարդակները:

Հոդվածի գիտական նորույթ

Սույն հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է փոխկապակցված մի քանի հարթություններում: Մասնավորապես, շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը հոդվածում մեկնաբանվում է ոչ թե որպես ոլորտային քաղաքականության կամ սոցիալական ծրագրերի բաղադրիչ, այլ որպես սահմանադրական կարգի հիմունքներից բխող կառուցվածքային և համընդհանուր բնույթի պետական դրական պարտավորություն, որը պայմանավորում է

[1] *Տե՛ս Կոլումբիայի Սահմանադրություն (Constitución Política de Colombia, 1991). Էկվադորի Սահմանադրություն (Constitución de la República del Ecuador, 2008):*

պետական իշխանության գործառույթների բովանդակությունը, իրավական սահմանափակումների տրամաբանությունը և պետության լեգիտիմության արժեքային հիմքերը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս շրջակա միջավայրի իրավական պաշտպանությունը ներառել սահմանադրական վերահսկողության և սահմանադրական արդարադատության լիարժեք հարթակում:

Երկրորդ՝ Սահմանադրության նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքը պետք է մեկնաբանվի կյանքի և առողջության պաշտպանության համատեքստում՝ որպես դրանց իրականացման նախապայման: Այս մոտեցումը համահունչ է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված դրական պարտավորությունների դոկտրինին և կարող է ծառայել որպես ուղենիշ ազգային դատարանների համար:

Երրորդ՝ համեմատական վերլուծությունը հիմնավորում է այն թեզը, որ ժամանակակից եվրոպական սահմանադրական համակարգերում շրջակա միջավայրի պահպանությունը վերաճում է միջսերնդային սահմանադրական պատասխանատվության: Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի փորձը վկայում է, որ բնապահպանական սահմանադրական նորմերը աստիճանաբար սահմանափակում են տնտեսական ազատությունները՝ հօգուտ հանրային և ապագա սերունդների շահերի:

Վերջապես, հոդվածն առաջարկում է Հայաստանի Հանրապետության իրավակարգի համար կիրառելի տեսական եզրահանգում, ըստ որի՝ շրջակա միջավայրի պահպանության պարտականության անտեսումը կարող է դիտարկվել ոչ միայն որպես մարդու իրավունքների խախտում, այլ նաև որպես սահմանադրական կարգի հիմունքների խաթարում: Այս դիրքորոշումը կարող է կարևոր նշանակություն ունենալ ինչպես սահմանադրական արդարադատության, այնպես էլ օրենսդրական քաղաքականության զարգացման համար:

Առաջարկներ Հայաստանի Հանրապետության օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի բարեփոխումների համար

Նոր սահմանադրական կամ օրենսդրական փոփոխություններով անհրաժեշտ է հստակ ձևակերպել պետության դրական պարտավորությունները՝ ապահովելու մարդկանց իրավունքների պաշտպանությունը առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու տեսանկյունից:

Անհրաժեշտ է պետական և տեղական մակարդակներում էկոլոգիական կառավարման մեխանիզմների ամրապնդում՝ սահմանելով պետական և տեղական մարմինների պատասխանատվության հստակ չափանիշներ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, ներառյալ կանխարգելիչ և վերահսկողական գործիքակազմերը: Օրենսդրական մակարդակում պետք է ամրագրվեն քաղաքացիների մասնակցության և հանրային վերահսկողության պարտադիր հիմքեր՝ համահունչ Օրհուսի կոնվենցիային, ներառելով տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման և իրավական պաշտպանության երաշխիքներ:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է ինտեգրել միջազգային և եվրոպական փորձը՝ հատկապես Եվրոպական դատարանի ուղենիշային որոշումները (Öneryildiz v. Turkey, López Ostra v. Spain, Fadeyeva v. Russia, Taşkin and Others v. Turkey) որպես ազգային դատական պրակտիկայի մեկնաբանական ուղեցույցներ:

Խնդրո առարկայի համապարփակ լուծման համար գտնում եմ, որ անհրաժեշտ է նոր Սահմանադրությամբ ամրագրել հետևյալ կարգավորումները.

1. Պետության սահմանադրական պարտավորությունը՝ **ապահովելու** շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

2. Յուրաքանչյուր մարդու սահմանադրական պարտականություն՝ մասնակցել շրջակա միջավայրի պահպանությանը և բարելավմանը, օրենքով սահմանված կարգով կանխել իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրին վնասի պատճառումը, կամ՝ դրա անհնարինության դեպքում, սահմանափակել վնասի բացասական հետևանքները:

3. Յուրաքանչյուր մարդու սահմանադրական պարտականություն՝ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել շրջակա միջավայրին իր պատճառած վնասը:

4.Նախատեսել իրավունք այն մասին, որ մարդն իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:

5. Նախատեսել սահմանադրական իրավունք այն մասին, որ մարդն օրենքով սահմանված պայմաններով և ծավալով ունենա հանրային մարմինների տիրապետման ներքո գտնվող շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության հասանելիություն և շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող հանրային որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք:

Եզրակացություններ

Ամփոփելով վերլուծությունը՝ կարելի է եզրակացնել, որ շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը հանդիսանում է ոչ միայն օրենսդրական կամ քաղաքական պահանջ, այլև հիմնարար սահմանադրական նշանակություն ունեցող սկզբունք, որը սերտորեն կապված է մարդու կյանքի, առողջության և ընդհանուր բարեկեցության իրավունքների պաշտպանության հետ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և միջազգային պարտավորությունների համադրությունը ցույց է տալիս, որ պետությունը պարտավոր է ապահովել արդյունավետ մեխանիզմներ շրջակա միջավայրի պահպանության, կայուն օգտագործման և հանրության մասնակցության ապահովման համար:

Այս մոտեցումը հաստատում է, որ շրջակա միջավայրի պահպանության պարտականությունը միաժամանակ առնչվում է սահմանադրական կարգի հիմունքներին և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը: Պետությունը, այդ պարտականության շրջանակում, պարտավոր է ոչ միայն

ապահովել անհատի՝ բարենպաստ և անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությունը, այլև իրականացնել իր բոլոր գործառույթները (ներառյալ բնապահպանական, տնտեսական և վարչական որոշումները) օրենքի գերակայությամբ, համաչափության սկզբունքով և կանխարգելիչ մոտեցմամբ՝ չստեղծելով նոր էկոլոգիական սպառնալիքներ հասարակության համար: Վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դիտարկվի որպես պետության անընդհատ և հիմնարար պարտականություն, քանի որ այն անմիջականորեն նպաստում է մարդու իրավունքների արդյունավետ իրացմանը և կանխում է բնապահպանական ռիսկերից բխող այնպիսի վտանգները, որոնք կարող են վնասել հասարակական անվտանգությանը և հանրային բարեկեցությանը:

Այսպիսով, շրջակա միջավայրի պահպանությունը սահմանադրական և իրավական տեսանկյունից հանդես է գալիս ոչ միայն որպես պարտականություն, այլ նաև որպես հիմնարար դիրքորոշում՝ ուղղված հանրային առողջության, սոցիալական կայունության և ապագա սերունդների իրավունքների պաշտպանությանը: Այն հանդիսանում է պետության սահմանադրական կարգի, իրավական համակարգի և միջազգային պարտավորությունների ինտեգրված բաղադրիչ, որը պահանջում է համապարփակ և արդյունավետ իրագործում բոլոր մակարդակներում:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության և այլ երկրների Սահմանադրություններ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (1995 թ., վերջին փոփոխություններ՝ 2021 թ.). Երևանի հրատարակություն:
2. Ֆրանսիայի Սահմանադրության շրջակա միջավայրի խարտիա (Charte de l'environnement, 2004):
3. Գերմանիայի Դաշնության Սահմանադրություն (Grundgesetz für die Bundesrepublik Deutschland, 1949 թ., փոփոխված՝ 2021 թ.):
4. Իտալիայի Սահմանադրություն (Costituzione della Repubblica Italiana, 1948, փոփոխություններ՝ 2022):
5. Իսպանիայի Սահմանադրություն (Constitución Española, 1978):
6. Պորտուգալիայի Սահմանադրություն (Constituição da República Portuguesa, 1976):
7. Կոլումբիայի Սահմանադրություն (Constitución Política de Colombia, 1991):
8. Էկվադորի Սահմանադրություն (Constitución de la República del Ecuador, 2008):

Միջազգային կոնվենցիաներ

9. Եվրոպայի Խորհուրդ. (1950). Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին. Հռոմ (Council of Europe.

(1950). Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms. Rome: Council of Europe):

10. Միավորված Ազգերի Կազմակերպություն. (1998). Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա), (United Nations. (1998). Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters (Aarhus Convention)):

Եվրոպական դատարանի նախադեպային ակտեր

11. *Öneryildiz v. Turkey, GC (Օներյըլդըզն ընդդեմ Թուրքիայի,* Մեծ պալատ, 30.11.2004 թ. (գանգատ՝ 48939/99):

12. *Budayeva and Others v. Russia, (Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի,* 20.03.2008 թ. (գանգատներ՝ 15339/02, 21166/02, 20058/02, 11673/02, 15343/02 միացված գործեր):

13. *López Ostra v. Spain, (Լոպես Օստրան ընդդեմ Իսպանիայի,* 09.12.1994 թ. (գանգատ՝ 16798/90):

14. *Fadeyeva v. Russia, (Ֆադեևան ընդդեմ Ռուսաստանի,* 09.06.2005 թ. (գանգատ՝ 55723/00):

15. *Dubetska and Others v. Ukraine, (Դուբեցկան և այլք ընդդեմ Ուկրաինայի*, 10.02.2011 թ. (գանգատ՝ 30499/03):

16. *Taşkin and Others v. Turkey, (Թաշքըն և այլք ընդդեմ Թուրքիայի,* 10.11.2004 թ. (գանգատ՝ 46117/99):

17. *Társaság a Szabadságjogokért v. Hungary, (Թարշաշագ ա Սաբաղշագյոգոկերտն ընդդեմ Հունգարիայի*, 14.03.2009 թ. (գանգատ՝ 37374/05):

Գիտական աղբյուրներ

18. **Բոյլ Ա.** (2012). Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը. ո՞րն է հաջորդ քայլը: Եվրոպական միջազգային իրավունքի ամսագիր (**Boyle, A.** (2012). Human Rights and the Environment: Where Next? European Journal of International Law, 23(3), 613–642):

19. **Սանդս Փ., Փիլ Ջ., Ֆաբրա Ա. և Մաքենզի Ռ.** (2018). Միջազգային բնապահպանական իրավունքի սկզբունքներ (4-րդ հրատարակություն): Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն (**Sands, P., Peel, J., Fabra, A., & MacKenzie, R.** (2018). Principles of International Environmental Law (4th ed.). Cambridge University Press):

20. **Շելթն, Դ.** (2011). Շրջակա միջավայրի պաշտպանությունը և մարդու իրավունքները: Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն (**Shelton, D.** (2011). Human Rights and the Environment: The International and Comparative Law Perspective. Cambridge University Press):

21. **Նոքս Ջ. Հ. և Փեջան Ռ.** (2018). Առողջ շրջակա միջավայրում ապրելու մարդու իրավունքը: Հարվարդի բնապահպանական իրավունքի ակնարկ (**Knox, J.**

H., & Pejan, R. (2018). The Human Right to a Healthy Environment. Harvard Environmental Law Review, 42(2), 1–40):

22. **Փիլ Ջ. և Օսոֆսքի Հ.** (2015). Կլիմայական փոփոխությունների վերաբերյալ դատական վեճեր. կարգավորող ուղիներ դեպի ավելի մաքուր էներգիա: Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն (**Peel, J., & Osofsky, H.** (2015). Climate Change Litigation: Regulatory Pathways to Cleaner Energy. Cambridge University Press):

23. **Բոյլ Ա. և Անդերսոն Մ.** (1996). Շրջակա միջավայրի պաշտպանության մարդու իրավունքների մոտեցումները (Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն (**Boyle, A., & Anderson, M.** (1996). Human Rights Approaches to Environmental Protection. Oxford University Press):

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В СОВРЕМЕННЫЙ ПЕРИОД

Аннотация

В данной статье рассматривается обязанность по охране окружающей среды как составная часть основополагающего конституционного порядка государства в контексте Конституции Республики Армения (далее – Конституция), прецедентного права Европейского суда по правам человека (Европейского суда) и сравнительного конституционно-правового опыта. Анализируются положения Конституции Республики Армения, прямо или косвенно закрепляющие обязанность по охране окружающей среды, с учетом ее связи с верховенством права, человеческим достоинством, правом на жизнь и здоровье. В статье представлен углубленный правовой анализ прецедентов Европейского суда, а также сравнительное исследование конституционных моделей Германии, Франции, Италии и других стран.

Целью данной статьи является анализ обязанности по защите окружающей среды как составной части основ конституционного строя государства и условия эффективного обеспечения основных прав человека посредством выявления ее конституционно-правового значения в контексте реализации прав на жизнь, здоровье и благоприятную среду обитания, а также путем изучения позитивных и негативных обязательств государства в свете международного и европейского права, в частности практики Европейского суда по правам человека и сравнительно-конституционного и правового подходов.

Ключевые слова: конституционный строй, окружающая среда, права человека, Конституция Республики Армения, Европейский суд, сравнительно-конституционное право.

PROBLEMS OF CONSTITUTIONAL AND LEGAL REGULATION OF ENVIRONMENTAL PROTECTION IN THE MODERN PERIOD

Annotation

This article examines the obligation to protect the environment as a component of the fundamentals of the constitutional order of the state in the context of the Constitution of the Republic of Armenia (hereinafter referred to as the Constitution), the case law of the European Court of Human Rights (European Court) and comparative constitutional-legal experience. The provisions of the Constitution of the Republic of Armenia that directly or indirectly enshrine the obligation to protect the environment are analyzed, linking it to the rule of law, human dignity, the rights to life and health. The article presents an in-depth legal analysis of the precedents of the European Court, as well as a comparative study of the constitutional models of Germany, France, Italy and other countries.

The purpose of this article is to analyze the obligation to protect the environment as a component of the foundations of the constitutional order of the state and a condition for the effective provision of fundamental human rights, revealing its constitutional and legal significance in the context of the realization of the rights to life, health and a favorable living environment, as well as studying the positive and negative obligations of the state in the light of international and European law, in particular, the practice of the European Court of Human Rights and comparative constitutional and legal approaches.

Keywords: constitutional order, environment, human rights, Constitution of the Republic of Armenia, European Court, comparative constitutional law.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 25.12.2025 թ., գրվել է գրախոսության 26.12.2025 թ., ընդունվել է տպագրության 29.12.2025 թ.: